Հավելված N 2
ՀՀ վարչապետի N 1236 - Ա
որոշման

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

ԳԵՐԻՆԵՐԻ, ՊԱՏԱՆԴՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՅՏ ԿՈՐԱԾ (ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐՆ ԱՆՀԱՅՏ) ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Սույն աշխատակարգով կարգավորվում են գերիների, պատանդների և անհայտ կորած (գտնվելու վայրն անհայտ) անձանց հարցերով զբաղվող միջգերատեսաչական հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) գործունեության կազմակերպման հետ կապված հարաբերությունները:

2. Հանձնաժողովը հասարակական հիմունքներով գործող խորհրդակցական մարմին է, որի գործունեությունը կանոնակարգվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

3. Հանձնաժողովի խնդիրներն են՝

1) իր իրավասության սահմաններում աջակցել գերիների, պատանդների և անհայտ կորած (գտնվելու վայրն անհայտ) անձանց որոնողական ու վերադարձնելու աշխատանքներին.

2) մշտական կապ պահպանել գերիների, պատանդների և անհայտ կորած (գտնվելու վայրն անհայտ) անձանց ընտանիքների անդամների ու հարազատների, ինչպես նաև շահագրգիռ մարմինների և կազմակերպությունների հետ:

4. Հանձնաժողովն իր խնդիրներին համապատասխան՝

1) ապահովում է Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում գտնվող գերիների, պատանդների և անհայտ կորած (գտնվելու վայրն անհայտ) անձանց վերաբերյալ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների կողմից հավաքագրված տվյալների համադրումը, անճշտությունների հայտնաբերման դեպքում դրանք ստուգելու և ուղղելու նպատակով համապատասխան առաջարկություններ է ներկայացնում իրավասու մարմիններին.

2) իր իրավասության սահմաններում աջակցում է գերիների, պատանդների և անհայտ կորած (գտնվելու վայրն անհայտ) անձանց որոնման, հայտնաբերման ու վերադարձնելու ուղղությամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքներին, համագործակցում է այդ աշխատանքներին ներգրավված հասարակական կազմակերպությունների և ֆիզիկական անձանց հետ.

3) համապատասխան մարմիններին առաջարկություն է ներկայացնում գերիների, պատանդների և անհայտ կորած (գտնվելու վայրն անհայտ) անձանց հարցերով քարոզչության, որոնողական ու փոխանակման աշխատանքների վերաբերյալ.

4) գերիների, պատանդների և անհայտ կորած (գտնվելու վայրն անհայտ) անձանց հարազատներին հնարավորինս սեղմ ժամկետում հայտնում է ձեռք բերված հավաստի և թույլատրելի տեղեկատվությունը, ինչպես նաև նրանց կողմից բարձրացված խնդիրների լուծման ուղղությամբ համապատասխան առաջարկություններ է ներկայացնում իրավասու մարմիններին.

5) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին առաջարկություններ է ներկայացնում գերիների, պատանդների և անհայտ կորած (գտնվելու վայրն անհայտ) անձանց ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու ուղղությամբ.

6) ըստ անհրաժեշտության՝ համագործակցում է գերիների, պատանդների և անհայտ կորած (գտնվելու վայրն անհայտ) անձանց հարցերով զբաղվող մարմինների ու միջազգային կազմակերպությունների հետ, կազմակերպում է հանդիպումներ ինչպես նաև մասնակցում է օտարերկրյա պետություններում անցկացվող համանման միջոցառումներին, մշտական կապ է պահպանում գերիների, պատանդների և անհայտ կորած (գտնվելու վայրն անհայտ) անձանց հարցերով զբաղվող մարմինների, կազմակերպությունների ու ֆիզիկական անձանց հետ:

5. Հանձնաժողովը կազմված է 20 անդամից, որից 4-ը՝ գերիների, պատանդների և անհայտ կորած (գտնվելու վայրն անհայտ) անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների 1-ական ներկայացուցիչներ, այդ թվում՝ «Հայկական կարմիր խաչ ընկերություն» հասարակական կազմակերպության

ներկայացուցիչը: Հանձնաժողովի նախագահն է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ նաև ԱԱԾ) տնօրենը: Հանձնաժողովի անհատական կազմը հաստատվում է ԱԱԾ տնօրենի հրամանով:

6. Հանձնաժողովի կազմում ներկայացուցիչներ ունենալու ցանկություն ունեցող՝ գերիների, պատանդների և անհայտ կորած (գտնվելու վայրն անհայտ) անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունները (բացառությամբ «Հայկական կարմիր խաչ ընկերություն» հասարակական կազմակերպության) ԱԱԾ-ի պաշտոնական կայքում հրապարակված հայտարարության հիման վրա դիմում են ներկայացնում հանձնաժողովի նախագահին (հայտարարությունում նշված ձևաչափով և ժամկետներում): Հանձնաժողովն ընտրում է 3 կազմակերպության ներկայացուցիչ՝ նախապատվությունը տալով տվյալ բնագավառում առավել տևական աշխատանքային գործունեություն իրականացնող կազմակերպություններին, ինչպես նաև այն կազմակերպություններին, որոնց անդամակցում են գերիների, պատանդների և անհայտ կորած (գտնվելու վայրն անհայտ) անձանց առավել մեծ թվով հարազատներ: Ընտրված կազմակերպությունների ներկայացուցիչների տվյալները հանձնաժողովի կազմում ընդգրկելու նպատակով ներկայացվում են ԱԱԾ-ի տնօրենի հաստատմանը:

7. Հանձնաժողովի կազմում հասարակական կազմակերպությունների (բացառությամբ «Հայկական կարմիր խաչ ընկերություն» հասարակական կազմակերպության) ներկայացուցչի թափուր տեղ առաջանալու դեպքում հանձնաժողովի նոր անդամի նշանակումն իրականացվում է սույն հավելվածի 5-րդ և 6-րդ կետերով սահմանված կարգով:

8. Հանձնաժողովի կազմում ընդգրկված պաշտոնատար անձի («Հայկական կարմիր խաչ ընկերություն» հասարակական կազմակերպության ներկայացուցչի) փոփոխության դեպքում համապատասխան մարմինը (կազմակերպությունը) 5 աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի նախագահին է ներկայացնում հանձնաժողովի կազմում ընդգրկվող պաշտոնատար անձի (ներկայացուցչի) տվյալները:

9. Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվում են նիստերի միջոցով: Նիստերը հրավիրում և անցկացնում է հանձնաժողովի նախագահը, իսկ նրա

բացակայության դեպքում՝ հանձնաժողովի նախագահի որոշմամբ՝ հանձնաժողովի նախագահի տեղակալը: Նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան վեց ամիսը մեկ անգամ: Հանձնաժողովի նիստերի հրավիրման օրվա, վայրի և ժամանակի մասին հանձնաժողովի քարտուղարը հանձնաժողովի անդամներին ծանուցում է նիստից առնվազն 5 աշխատանքային օր առաջ:

10. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան ներկա է հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Հանձնաժողովի նիստի վերաբերյալ հանձնաժողովի քարտուղարի կողմից կազմվում է արձանագրություն, որը ստորագրվում է հանձնաժողովի նախագահի և նիստին ներկա գտնվող անդամների կողմից:

11. Հանձնաժողովի անդամները հանձնաժողովի նիստին մասնակցելու անհնարինության մասին նիստից երեք օր առաջ, իսկ հրատապ դեպքերում՝ անհապաղ, ծանուցում են հանձնաժողովի նախագահին:

12. Հանձնաժողովի նախագահը՝

1) կազմակերպում է հանձնաժողովի գործունեությունը.

2) ներկայացնում է հանձնաժողովը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, միջազգային և այլ կազմակերպություններում.

3) իրականացնում է հանձնաժողովի գործառույթներից բխող այլ լիազորություններ:

13. Հանձնաժողովի անդամները՝

1) մասնակցում են հանձնաժողովի նիստերին, հանձնաժողովի աշխատանքային պլանների մշակման և իրագործման հետ կապված աշխատանքներին.

2) համագործակցում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների ու ֆիզիկական անձանց հետ՝ գերիների, պատանդների և անհայտ կորած (գտնվելու վայրն անհայտ) անձանց որոնման, հայտնաբերման ու վերադարձնելու գործում:

14. Հանձնաժողովի գործունեության կազմակերպական-տեխնիկական աշխատանքների իրականացումն ապահովում է ԱԱԾ-ն:

15. Հանձնաժողովի գործունեության հետ կապված փաստաթղթերի պահպանությունն իրականացվում է օրենսդրությամբ սահմանված կարգով:

16. Հանձնաժողովի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում աշխատանքային մարմին է համարվում հանձնաժողովին կից գործող աշխատանքային խումբը՝ հետևյալ կազմով.

1) աշխատանքային խմբի ղեկավար՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության ներկայացուցիչ.

2) աշխատանքային խմբի անդամներ՝

ա. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության ներկայացուցիչներ,

բ. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ներկայացուցիչ,

գ. Հայաստանի Հանրապետության ոստիկանության ներկայացուցիչ,

դ. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչ,

ե. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացուցիչ,

զ. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ներկայացուցիչ:

17. Աշխատանքային խմբի անհատական կազմը հաստատվում է ԱԱԾ-ի տնօրենի հրամանով:

18. Աշխատանքային խմբի անդամի փոփոխության դեպքում պետական համապատասխան մարմինը 5 աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի նախագահին է ներկայացնում աշխատանքային խմբի կազմում ընդգրկվող պաշտոնատար անձի տվյալները:

19. Աշխատանքային խմբի ղեկավարն ի պաշտոնե հանձնաժողովի քարտուղարն է, որը հանձնաժողովի անդամ չէ:

20. Աշխատանքային խմբի ղեկավարը՝

1) նախապատրաստում է հանձնաժողովի նիստերը.

2) մշակում և հանձնաժողովի քննարկմանն է ներկայացնում հանձնաժողովի գործունեության ոլորտին վերաբերող նյութերն ու ընթացիկ տեղեկությունները, ինչպես նաև նախապատրաստում է դրանց վերաբերող առաջարկություններ.

3) վերլուծում է հանձնաժողովի գործունեության ոլորտին վերաբերող հարցերը և արդյունքների մասին զեկուցում հանձնաժողովի նախագահին.

4) հանձնաժողովի նախագահին է ներկայացնում աշխատանքային խմբի գործունեության արդյունքները.

5) ղեկավարում է աշխատանքային խմբի գործունեությունը:

21. Աշխատանքային խմբի գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով:

22. Աշխատանքային խմբի ղեկավարի բացակայության դեպքում նրա գործառույթները կատարում է աշխատանքային խմբի անդամներից մեկը՝ հանձնաժողովի նախագահի որոշմամբ:

23. Աշխատանքային խմբի խնդիրներն ու գործունեությունը բխում են հանձնաժողովի խնդիրներից և գործառույթներից:

24. Հանձնաժողովի առջև դրված խնդիրների լուծման նպատակով և հանձնաժողովի նախագահի առանձին հանձնարարականները կատարելու նպատակով աշխատանքային խումբը կարող է գործուղվել Արցախի Հանրապետություն և Հայաստանի Հանրապետության մարզեր: Գործուղումների համար ավտոտրանսպորտի ապահովումը և գործուղման ծախսերը (սնունդ, գիշերակաց) կատարվում են ԱԱԾ-ի միջոցների հաշվին:

25. Ըստ անհրաժեշտության՝ աշխատանքային խմբի աշխատանքներին կարող են ներգրավվել նաև այլ մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչներ (մասնագետներ):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20.10.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ